

Ա. Զ. Դ. Ա. Բ. Ա. Ր Ո Ւ Ի Թ Ի Ւ Ն

Ա. Աթոռոյս Պատ. Տնօրէն Ժողովը, իր Հ.Բ. նիստին մէջ, նկատի առաւ բազմաթիւ բողոքներ թեմակալ առաջնորդներէն, և ի մասնաւորի կիլիկոյ Կաթողիկոսութեան պատկանող Կիպրոսի Կաթողիկոսական Փոխանորդ Հոգեչնորհ Տ. Երուանդ Վարդապետէն, որոնք միահամուռ կը բողոքէին Երուսաղէմի մեր կարգ մը Միաբաններու, ի մասնաւորի Հոգջ. Տ. Կորիւն Վ.րդ. Մանուկյանի գէմ, որ առանց յարգելու Ընդհ. Եկեղեցւոյ մէջ ծանօթ ու յարգուած կանոնը, իրենց չպատկանող թեմերու մէջ Սրբազն Պատարագ և Եկեղեցական արարմունքներ կը կատարեն, առանց պատկան թեմի Առաջնորդի զիտութեան և Թոյլտըւութեան:

Այսու խստիւ կ'ազդարարենք, որ յետ այսու եթէ նման բոլոր մը ընդունինք Ա. Աթոռոյս պատկանող ունի Միաբանի նկատմամբ, յանձապարտ պիտի նկատենք զինքը ու պիտի տանք արժանի իր պատիճը:

Գրիգոր Ա. Աթոռությ
ՊԱՏ. Տնօրէն ԺՈՂՈՎՐԾՈՅ

Ա. ՏԵՂԵԱՅ ԴԻԻՒՆԻՆ

Ա. ՅԱՐԱՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՆՈՅՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

18 Ապրիլ 1962 թուակիր համաձայնութեան ի գործադրութիւն, Երուսաղէմի երեք Պատրիարքարաններու ստորագրութեամբ համաձայնութիւն մը կնքուեցաւ Պր. Deschamps անուն Գրանսացի շինութեանց գործավարին Եետ: Յունիս 1ին, Պր. Տէշան ստանձնեց իր գործը, որ է հսկել ճարտարապետներու նախազիծներու գործադրութեան և ապահովել շինութեան բարեւոր ընթացքը:

Ե Յունիս 1962, Գշ. օր ժամը 4ին, երեք յարանուանութիւններու ներկայացուցիչներ ժողով գումարեցին ճարտարապետներու գրասեննեակին մէջ, որոշելու համար Ս. Յարութեան Տաճարի նորոգութիւններու յարորդ շերտին սահմանները: Առաջարկուեցաւ որ՝

1) Նոր գնուելիք շինանիւթերը ամբարուին Յունաց վանքի ստորերկրեայ մասին մէջ, խնայելու համար փոխաղբական դժուարութիւններ:

2) Մուտքի առաստաղի ծեփերուն վար առնուելուն պատճառով տարածութիւն փոշին արգիլելու համար, առժամանակ կերպով փակուին Հայոց բամնի պատու հանները, որոնք գէտի Տաճարի ներսի մասը կը նային:

3) Տաճարին տանիքի քարերը քակուին եւ անհրաժեշտ նորոգութիւնները կատարուելէ ետք նոյն ձեւով սալայատակուի տանիքը: Եւ նաց բամնի նորոգութիւնները Քաթոլիկոնին եւ հարաւային սինաշարին տակ շարունու կուին առանց ընդհատում:

4) Երրորդ կէտին ցուրզ իրաւակոն հարցեր ծագեան կողմերուն միջեւ, ինչ որ ստիպեց զանոնք հարցի բննութիւնը թւղուլ յաջորդ մողովի մը:

Երկրորդ եւ երրորդ մողով մը գումարուեցաւ Յունիսի 15ին եւ 14ին, սակայն առանց արդիւնքի:

* * *

Ա. Յարութեան Տաճարէն ներս աւարտեցաւ Հայոց Տեսչարանի նորոգութիւնը: Տաճարի մուտքի ծախակողմը, Սատուածամօր ուշաթափման վայրին կից, ըլդակակ, կամարակապ այս սրահը նախապէս բանուած էր երկու քի: Սկսուելով ըլդանուը նորոգութիւններու առիթէն, յարմար նկատուեցաւ կատարել ամբողջական նորոգութիւն:



մը նաև Տեսչարանէն ներս: Երկու բաժինները վեցուեցան եւ կազմուեցաւ միակ սրահ մը, որուն պատերը ծածկուեցան փայտով, զարդարանդակուած կամարածել փորագրութեամբ: Խսկ սրահի ճակատը յարդարուեցաւ մասնաւոր կերպով, ընդունելու համար Պատրիարքական Սթոոլը պատուանդանի մը վրայ: